



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՄՏԵԱՆ ԹԵՍԻ  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



## **ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ ՏՈՆԵՑ ՏՈՒՄԻԿ ԵՒ ԽԱՆԴԱՎԱՌ ՄԹԱՆՈԼՈՐԾԻ ՄԵԶ**

Բուն Բարեկենդանը Յայց. Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին մէջ, ու հայ ժողովուրդի ազգային Եկեղեցական կեանքն ներս, իրայատուկ տօն մըն է Եւ կը նշուի Մեծ Պահոց նախօրեակին:

Արեւմտեան մեր Թեմի տարիներու աւանդութեան համաձայն, այս տարի Եւս, Բուն Բարեկենդանի տօնին առիթով կազմակերպուած էր խրախճանական ձեռնարկ մը, հովանաւորութեամբ Եւ ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Յօր՝ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի Եւ կազմակերպութեամբ Ազգ. Առաջնորդարանի Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմնին Եւ Ծնողական Յանձնախումբին:

Խրախճանական բնոյթով ձեռնարկը տեղի ունեցաւ Կիրակի, 3 Փետրուար 2008ին, Կենտելի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ: Մասնակից եղան աւելի քան 400 հանդիսականներ:

Օրուան պատգամաբերն էր Ազգ. Ալեք Փիլիպոս վարժարանի դաստիարակ ուսուցչուի՝ Սօնա Մատարեանը, անմիջական ու կենդանի հաղորդականութեամբ փոխանցեց Բարեկենդանի տօնին իմաստը, նշելով բարեկենդանական տօնին առնչուած ժողովրդային տօնախմբութիւններն ու ազգային տոնիմիկ սովորութիւնները: Բարեկենդանը ըսաւ, յարգելի բանախօսուիին, «քարին, կենդանութիւնը Եւ կեանքը աւետելու, Աստուծոյ բարիքները ազատորէն վայելելու, ուրախութեամբ նորոգեալ կեանքը երախտապարտութեամբ դիմաւորել է: Բարեկենդանը մեզի կը վերյիշեցնէ նախամարդու սկզբնական ազատութիւններն ու վայելքները, միաժամանակ կը շեշտուի ազատորէն արտայայտուելու Եւ իշխող կրօնական թէ քաղաքական հեղինակութիւնները քննադատելու ոգին»:

Գեղարուեստական յայտագրի ընթացքին տաղանդաշատ բանաստեղծ Եւ հաւատաւոր հայորդի Ժագ Ս. Յակոբեան, հանդէս Եկաւ բարեկենդանեան խոհերով Եւ Վարդանաւոց հաւատամարտին նուիրուած բանաստեղծական հատուածներու ընթերցումներով: Ս. Նահատակաց, Ս. Կարապետ, Ս. Աստուածածին, Ս. Սարգիս Եւ Լա Ջրեսենթա Յովիտի Յայց. Առաք. Եկեղեցիներու կիրակնօրեայ դպրոցներու աշակերտներ հանդէս Եկան սաղմոս-աղօթքներով, Եւ Բարեկենդանեան Երգերով, արտասանութիւններով, խմբերգներով Եւ «կենդանիներու ժողով» կենդանական պատկերի ներկայացումով:

Այսուհետեւ, հանդիսավարը հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը, որպէսզի ուղղէ իր պատգամը: Սրբազան Յայոը վեր առաւ Բարեկենդանի

հոգեւոր իմաստը, շեշտելով մարդուն մեջ աստուածային պատկերին անաղարտ պահպանութիւնը, ինչպես նաև յիշեցնելով, թէ «ազատութիւնը պէտք չէ չարաշահել կամ շփոթել սանսարձակութեան եւ անօրինութեան հետ, որ մարդս մարդկային իր արժանիքներէն կը պար»։ Վերջապէս, Սրբազնը իր խօսքը եզրակացուց ըսելով. «Քարեկենդանը վերապրեցնելով նախամարդու դրախտային վիճակը՝ մարդուն կը յիշեցնէ իր առաքելութիւնն ու կոչումը, այս աշխարհի վրայ երկրաւոր իր դրախտը ստեղծելո»։

Ապա Առաջնորդ Սրբազնը մաղթեց, որ յառաջիկայ շաբաթներուն պահեցողութեան դիմող հաւատացեալներուն ուխտը ընդունելի ըլլայ Աստուծոյ մօտ։

Ըստանեկան տոհմիկ ու մտերմիկ մթսոլորտ վայելելէ ետք, Ներկաները տուն վերադառն հայկական աւանդական տօնախմբութեան մը մասնակցած ըլլալու հոգեկան գոհունակութեամբ։

Մ.Ծ.Վ.Ա.

## CELEBRATION OF PARENTAN

On Sunday, February 3<sup>rd</sup>, a family celebration of Paregentan took place at the “Armenak Der Bedrossian” Hall of St. Mary’s Church with over 400 guests in attendance. The celebration was held under the auspices of the Prelate and was organized by the Prelacy Sunday Schools’ directorate and PTO committee.

The keynote speaker was Rose and Alex Pilobos School teacher Mrs. Sona Madarian who spoke of the meaning of Paregentan and the traditions associated with the feast.

Among the participants in the artistic program were poet Jacques Hagopian who recited passages of poetry inspired by the Feast of Vartanants, and Sunday School students who performed songs and recitations.

In his closing remarks the Prelate commended the efforts of all the committees who faithfully support the endeavors of our Sunday Schools and contribute to their advancement, among them the Christian Education Department, Sunday Schools’ directorate Chair Mr. Hagop Tchagasspanian and members, Parent Committee members, Pastors, and Boards of Trustees.